



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՈՐՈՇՈՒՄ**

նոյեմբերի 2018 թվականի №  
քաղ. Երևան

**«ՔՄՅՈՒՆԻԹԻ ՍԵՆՔԻ ՖՈՐ ԴԻՎԵԼՈՓՄԵՆԹ» ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՄԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի սեպտեմբերի 26-ի №04-ԴԳ-02/3727 գրությունը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝

1) «Քմյունիթի Սենթր Ֆոր Դիվելոփմենթ» տարածաշրջանային համագործակցության հասարակական կազմակերպության Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ջուջևան գյուղում գտնվող նոր կառուցվող կամ վերակառուցվող ոչ կենցաղային նշանակության սպառման համակարգը (այսուհետ՝ սպառման համակարգ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական ցանցին (այսուհետ՝ էլեկտրական ցանց) միացվում է եռակողմ կնքված էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրով (այսուհետ՝ Միացման պայմանագիր)՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության, «Քմյունիթի Սենթր Ֆոր Դիվելոփմենթ» տարածաշրջանային համագործակցության հասարակական կազմակերպության և «Մասիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև փոխհամաձայնեցված կարգով.

- 2) Էլեկտրական ցանցին միացման վճարը հաշվարկվում է համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» №659Ն որոշման.
- 3) Միացման պայմանագիրը կնքվում է սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման նպատակով «Քմյունիթի Սենթր Ֆոր Դիվելոփմենթ» տարածաշրջանային համագործակցության հասարակական կազմակերպության կողմից դիմումն առձեռն ներկայացված լինելու դեպքում՝ անմիջապես, իսկ փոստային կապի միջոցով ներկայացված լինելու դեպքում՝ դիմումն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:
2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված պայմանագրով նախատեսված կանխավճարի վճարման օրվանից փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու առավելագույն ժամկետը՝ էլեկտրական ցանցին 6(10) կՎ լարմամբ միացման դեպքում չի կարող գերազանցել 90 օրը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը, «Քմյունիթի Սենթր Ֆոր Դիվելոփմենթ» տարածաշրջանային համագործակցության հասարակական կազմակերպությանը և «Մասիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

**Մ. ՍՈՂՈՍՈՆՅԱՆ**